

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի մարտի 27-ին, Ծաղկազարդի տոնի առթիվ, Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցել և քարոզել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, հավատացյալ ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ: Հընթացս ս. պատարագի ընթերցվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Հայոց Հայրապետը տեղի եկեղեցու Տ. Գարեգին քահանային պարգևատրում էր ավագության պատվով: Առաջնորդ սրբազանը, տեր հորը հանձնելով հայրապետական կոնդակը, սրտագին շնորհավորանքներ է ուղղել նրան՝ մաղթելով անձնվեր ծառայության արդյունաշատ երկար տարիներ ի փառս Հայաստանյայց Եկեղեցու:

Հավարտ ս. պատարագի թեմական խորհուրդը, ի պատիվ սրբազան հոր, քաղաքի «Բալկան» հյուրանոցում տվել է ճաշկերույթ:

Ապրիլի 3-ին, Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ, Տ. Տիրայր արքեպիսկոպոսը պատարագել և քարոզել է Պլովդիվ հայաշատ քաղաքի Ս. Գևորգ եկեղեցում: Այստեղ նույնպես հավաքվել է հավատացյալների խումբերամ մի բազմություն՝ հաղորդվելու վատկական հոգեպարար արարողությանց: Համաժողովրդական մեծ տոնի առթիվ պատարագիչ սրբազանն արտասանել է ոգեշունչ մի քարոզ՝ վեր հանելով Փրկչի Հարության մեծ խորհուրդն ու նշանակությունը: Այնուհետև ընթերցվել են Ամենայն Հայոց Հայրապետի վույգ կոնդակները Պլովդիվի հայոց եկեղեցու քառաձայն երգչախմբի կազմության հիսնամյակի և կանանց երգչախմբի կազմության երեսնամյակի առթիվ:

Նույն օրը, երեկոյան, եկեղեցուն կից մշակութային տան սրահում տեղի է ունեցել հանդիպում և սիրո ճաշ երգչախմբի անդամների և Պլովդիվի հայկական համայնքի ծանոթ ազգայինների միջև՝ գլխավորությամբ առաջնորդ սրբազան հոր: Խանդավառ մթնոլորտում Տ. Տիրայր արքեպիսկոպոսը շնորհավորանքի ջերմ խոսքեր է ուղղել երգչախմբի անդամներին և բազմավաստակ խմբավար Սարգիս Պալթայանին՝ տալով նրանց իր օրհնությունները և մաղթելով, որ նրանք հայ հոգևոր երաժշտությունը միշտ անաղարտ և բարձր հնչեցնեն մեր աղոթքի Տներից ներս:

Ապրիլի 6—7 օրերին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդը թեմական այցելությամբ եղել է նաև Բուրգաս քաղաքում, ապա ապրիլի 9—12 օրերին՝ Հյուսիսային Բուլղարիայի սահմանամերձ Ռուսե քաղաքում, որտեղ ապրում են շուրջ 1500 հայեր:

Սրբազան հայրը վերոհիշյալ քաղաքներում հանդիպումներ է ունեցել եկեղեցական վար-

Առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը Պլովդիվի հայոց կանանց եկեղեցական երգչախմբի հետ

Առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը ավագության պատվի արժանացած Տ. Գարեգին քահանայի և Պլովդիվի հայոց եկեղեցական վարչության անդամների հետ

չությանց անդամների հետ և վրուցել եկեղեցական մի շարք հարցերի շուրջ: Սուրբ Հարության տոնին հաջորդող Նոր կիրակիին նա Ռուսե քաղաքի հայոց եկեղեցում ներկա է եղել սուրբ պատարագին և հավաքված բազում հավատացյալներին մխիթարել է Բանին կենաց քարոզությամբ:

Ապրիլի 12-ին Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը վերադարձել է իր աթոռանիստը՝ Բուխարեստ: